«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Պատմական մտածողությունը հայոց պատմության ուսուցման գործընթացում

ԱՌԱՐԿԱ՝ Հայոց պատմություն

ՀԵՂԻՆԱԿ՝ Հայարփի Կուրղինյան

ՄԱՐԶ՝ Արագածոտնի մարզ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ Նորաշենի Ռաֆիկ Հարությունյանի անվան միջնակարգ դպրոց

ՂԵԿԱՎԱՐ՝ Նարինե Զաքյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

1. Ներածություն _____ *2*

2. Գլուխ 1. Ինչ է պատմությունը և պատմական ակտիվ մտածողությունը _____ *4*

3. Գլուխ 2. Ինչպես պատմական մտածողություն զարգացնել հայոց պատմության ուսուցման գործընթացում _____ *14*

4. Եզրակացություն _____ *21*

5. Գրականության ցանկ _____ *23*

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության առարկան սովորողների պատմական և քննադատական մտածողության զարգացման համար պատմության դասավանդման ընթացքում բազմակի աղբյուրների կիրառման արդյունավետության ուսումնասիրությունն է: Հետազոտությունը մեկնարկում է այն վարկածից, որ հմտությունները, որոնք անհրաժեշտ են և ձևավորվում են բազմակի աղբյուրների հետ աշխատելիս, նպաստում են ինչպես պատմական մտածողության, այնպես էլ տեղեկատվության քննադատական վերլուծության, մեկնաբանման, գնահատման և դրանց հիման վրա որոշումների կայացման հմտությունների զարգացմանը:

Մեր օրերում հաճախ է շեշտվում այն ընդհանուր մոտեցումը, որ բարձրագույն կրթության նպատակը միայն գիտելիքի տրամադրումը չէ: Այսօր կրթական համակարգն ունի առավել բարդ առաքելություն, այն է ձևավորել սերունդ, որն ունի ինքնուրույնություն քննադատաբար մտածելու ինչպես ակադեմիական առարկաների, այնպես էլ իրական կյանքում գոյություն ունեցող խնդիրների շուրջ:

Քննադատական մտածողությանը նպաստող հմտությունների զարգացումը կարևորվում է ժողովրդավարական հասարակության ձևավորման և ժողովրդավարական արժեքների պահպանման տեսանկյունից:

Քննադատական մտածողության ձևավորումն ու զարգացումն այսօր հանդիսանում է բարձրագույն կրթության գլխավոր նպատակներից մեկը: Այս հետազոտության նպատակն է ստեղծել հիմք ձևավորելու քննադատական մտածողություն զարգացնող կրթական համակարգ, որն իր հերթին կարող է գործիք հանդիսանալ ինքնության հիմքի վրա ծագող կոնֆլիկտների կանխման, կարգավորման և հաշտեցման համար: Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ ՀՀ դպրոցներում ստացած կրթությունն ամենևին չի նպաստում քննադատական մտածողության ձևավորմանը: Ուստի հարց է առաջանում, թե որքանով են ՀՀ կրթական համակարգի բարեփոխումների առջև դրված նպատակները նպաստում համակարգում առկա խնդիրների լուծմանը: Հետևաբար, հետազոտության նախասահմանված խնդիրների ուսումնասիրությունը թույլ է տալիս հասկանալ, թե որքանով է ՀՀ կրթական համակարգը ձևավորում և զարգացնում քննադատական մտածողություն, սահմանել քննադատական մտածողության կարևորությունը հասարակության վերափոխման առումով և պատճառաբանել հայեցակարգային փաստաթղթերում քննադատական մտածողության զարգացման մասին ընդգծելու կարևորությունը, և վերջապես ներկայացնել առաջարկություններ, թե ինչպես կարելի է քննադատական մտածողությունը դարձնել մեր սովորողներին բնորոշ հմտութ

Հիմնաբառեր- պատմության դասավանդում, պատմության ուսումնառություն, պատմական մտածողություն, պատմական մտածողության հմտություններ, քննադատական մտածողություն:

ԳԼՈՒԽ 1. ԻՆՉ Է ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՏԻՎ ՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ

<<Պատմություն>> բառն ունի առնվազն երեք իմաստ:Իմաստներից մեկը

<<անցյալն >> է,օրինակ՝ <<Հայաստանի պատմություն>> արտահայտությունը կարելի է կիրառել հայ ժողովրդի փորձառությունն ու ինստիտուտները ձևավորած դեպքերի և իրադարձությունների վերաբերյալ:

Բառի մեկ այլ իմաստը՝ <<գիտելիք անցյալի մասին>> ,օրինակ՝ գրքեր,վավերագրական ֆիլմեր և այլն:

Երրորդ իմաստը վերաբերում է գիտելիք կառուցելու առանձին գործընթացին .դա այն աշխատանքն է,որ իրականացնում ենք:

–Պատմության հակիրճ պատմությունը և դրա դասերը

Այսօր ամենատարածված տեսակետի համաձայն պատմությունը գիտություն է մարդկային ցեղի և նրա ընկերային համակեցական կյանքի անցյալի մասին: Առաջին հայացքից կարծես թե իրապես նշվածը արտահայտում է պատմություն գիտության էությունը: Սակայն հարցը ունի շատ ավելի խորքային բովանդակություն, քան թվում է: Ընդհանրապես կարող ենք վստահորեն արձանագրել, որ պատմություն

կոչվող եղելույթը ի հայտ է եկել մարդկության առաջացման գործընթացին զուգահեռ և հընթացս վերջինի ծավալած գործունեության անցել է զարգացման դժվարին, աստիճանական էվոլյուցիայի ճանապարհ:Ի սկզբանե պատմությունն ունեցել է նարատիվ բնույթ, այն է՝ հանդես է եկել ասքերի, առասպելների, պատմվածքների միջոցով, այլ խոսքով՝ եղել է բանավոր: Հընթացս ժամանակի մարդկությունը սկսում է զարգացում ապրել համակեցական կյանքի բոլոր ասպարեզներում՝ արտադրական, տնտեսական, սոցիալական, մշակութային և այլն: Եվ զարգացման ինչ–որ մի շրջանում, կենցաղային կամ այսպես կոչված տնտեսական դրդապատճառներից ելնելով, մարդը ստեղծում է առաջին գրային համակարգերը: Սակայն դրանք դեռևս չունեին որևէ այլ նշանակություն և կիրառվում էին միայն տնտեսական կամ առևտրական գործերում՝ նշելու համար ստացված բերքի, ունեցած եկամուտի կամ, ասենք, կորուստի չափերը: Միայն որոշ ժամանակ անց է, որ գիրը սկսում է կիրառվել մշակութային տեքստերի գրանցման նպատակով: Փաստորեն իր զարգացման երկրորդ փուլում արդեն պատմությունը դառնում է գրավոր, այն է՝ ի հայտ են գալիս առաջին գրավոր տեքստերը՝ իբրև մարդկային գործունեության ամենատարբեր ոլորտներում կատարվածի նկարագրություն՝ ամրագրված որևէ իրի (պայմանականորեն ընդունենք թղթի) վրա: Այս փուլում, որը, ի դեպ, կարող ենք ասել, որ շարունակվում է ընդհուպ մինչև մեր օրերը (թեպետ պետք է խոստովանել, որ վերջին շրջանում, հատկապես տեղեկատվական տեխնոլոգիաների աննախընթաց առաջընթացի պայմաններում, ի հայտ են եկել պատմության փոխանցման այլ մեխանիզմներ, ի դեմս կինոֆիլմերի, համակարգչային չիպերի և այլ նմանատիպ եղանակների), պատմության գրավոր փոխանցմանը զուգահեռ իր գոյությունն է պահպանում նաև նրա նարատիվ տարբերակը: Մարդկային բանավոր հիշողության հնարավորությունների սղությունից ելնելով՝ գրավոր տեքստերի միջոցով ընտրվում են ժամանակի հասարակական մտքի տեսանկյունից առավել կարևորագույն դեպքերը, դեմքերը, իրադարձությունները, որոնց մասին առկա տեղեկույթն էլ փոխանցվում է թղթին: Զուգահեռ կենցաղային–ժողովրդական միտքը բանավոր կերպով սերունդներին է հասցնում իր դիտանկյունից արժանահիշատակ երևույթներն ու եղելույթները: Պետք է խոստովանել, որ հաճախ այս երկուսի՝ հասարակական–քաղաքական, գիտական և ժողովրդական ընկալումների միջև լինում են տարբերություններ, եթե չասենք նույնիսկ հակոտնյա դրսևորումներ:

Այսպիսով՝ առաջին և ամենակարևոր պատճառը, որ մենք զբաղվում ենք պատմության ուսումնասիրությամբ, նախորդած սերունդների փորձի յուրացումն է բառի բուն իմաստով, և երկրորդը, որը ոչ պակաս կարևոր է, ապագա սերունդներին մեր ժառանգածի փոխանցումը և վերջինիս հարստացումն է մեր գործունեությամբ: Սակայն մեկ կարևոր նկատառում. ելնելով ընկերային համակեցական հարացույցների և ընդհանրապես մարդուն բնորոշ այլության հատկորոշիչից՝ տարբեր հասարակական միջավայրերում պատմությունը անցնում է զարգացման տարբեր ճանապարհներ: Այսպես օրինակ. հին արևելյան ժողովուրդների մոտ

պատմությունը այդպես էլ մնաց սոսկ իբրև եղածի, կատարվածի տեղեկույթ: Հին Արևելքում այդպես էլ չձևավորվեց պատմագիտություն դիսցիպլինը: Ավելի մանրամասնելու նպատակով ասենք, որ Հին Արևելքում պատմություն շարադրողները իրենց առջև դրել էին հետևյալ հարցադրումները՝ ի՞նչ, որտե՞ղ, ե՞րբ: Այսինքն՝ նրանք իրադարձությունների մասին տեղեկություններ հաղորդելիս բավարարվում էին միայն տեղի, մասնակից անձանց և ժամանակագրության մասին համապատասխան նյութ փոխանցելով: Սակայն նրանք այդպես էլ չփորձեցին այդ ավանդական դարձած հարցադրումների կողքին ավելացնել նորերը՝ ի դեմս ինչու՞, եթե, ապա ձևերի: Արտաքնապես այս պարզունակ հարցերին անդրադառնալը պատմության կոնտեքստի շրջանակներում էական փոփոխություններ է ներմուծում վերջինիս ընկալման հասարակական և գիտական մակարդակներում:

-Ոչ թե ի՞նչ, այլ ի՞նչու

Ցանկանում ենք ձեր ուշադրությունը հրավիրել «պատմություն» և «պատմագիտություն» եզրույթների տարբերության վրա: Պատմությունը տեղի ունեցածի, կատարվածի սոսկ նկարագրությունն է՝ հիմնված ականատեսների վկայությունների վրա: Պատմություն շարադրողները մեծամասամբ թղթին են հանձնում այն, ինչի մասին տեղեկացել են այլ աղբյուրներից, կամ լավագույն դեպքում եղել են ականատեսը՝ չփորձելով, սակայն, ուրիշներից ստացված տեղեկույթը ենթարկել վերլուծության, համեմատության, չցանկանալով գտնել կապը պատմական եղելությունների միջև: Բոլորովին այլ է պատմագիտության պարագայում. Պատմագետը, երբ զբաղվում է պատմության ուսումնասիրությամբ, այն չի դիտարկում իբրև սոսկ անցած–գնացած իրադարձությունների նկարագրություն, այլ փորձում է գտնել պատճառահետևանքային կապը, դեպքերի զարգանալու ընդհանուր տրամաբանությունը, պատճառները, հետևանքները .... Ահա թե ինչու չենք կիսում այն կարծիքը, թե իբր պատմությունը գիտություն է միայն անցյալի մասին և չունի արդիական նշանակություն: Ճիշտ հակառակը. պատմությունը գիտություն է անցյալի ուսումնասիրությամբ ապագան ճիշտ կառուցելու մասին: Նրանք, ովքեր առավել դասեր կքաղեն պատմության մատուցած անգին դասերից, հնարավորություն կունենան ստեղծելու ապահով ապագա և գիտելիքներով օգնելու կայացնել ճիշտ ընտրություն:

-Ինչու ուսումնասիրել պատմությունը



Ամենից պարզ ու տարածված պատասխանները սրանք են. «Պետք է սովորել անցյալից և չկրկնել սխալները», կամ «Պետք է իմանալ անցյալը, հասկանալու համար, թե ինչ է մեզ սպասվում ապագայում»:Ես չեմ հավատում նման պարզ լուծումների և վերապահումով եմ մոտենում այս պնդումներին: Կարծում եմ՝ պատմությունը երբեք նույնությամբ չի կրկնվում: Կարող են լինել նման իրավիճակներ, նմանություններ մեր պատկերացումներում և մեկնաբանություններում, բայց կրկնությունը բացառված է, և հետևաբար ուղղակի հետևություններ անելը՝ անհնար: Մյուս կողմից, իհարկե, անցյալի զարգացման տրամաբանությունը կարող է հուշումներ տալ, քանի որ չափազանց մեծ նշանակություն ունի պատմական իներցիան, որով և հաճախ պայմանավորված է ներկան: Սակայն այս պարագայում անգամ պատմությունը մեզ զարգացման մի շարք հնարավորություններ է առաջարկում, և գուշակել, թե դրանցից որ մեկը իրականություն կդառնա, չափազանց դժվար է:Պատմությունը նախ և առաջ ուսումնասիրում է մարդուն: Ըստ պատմաբան Մարկ Բլոկի՝ այն գիտություն է մարդկանց մասին ժամանակի մեջ: Եվ ինչպես ներկան է կարելի հասկանալ անցյալի միջոցով, այնպես էլ անցյալի շատ իրադարձություններ են դառնում հասկանալի ներկայի միջոցով: Համաձայնեք, թե որքա՛ն պատմական իրադարձություններ մեզ համար շատ ավելի հասկանալի դարձան վերջին ամիսներին՝ մեր սեփական վերապրումի միջոցով:

-Պատմությունն ու հայկական ինքնությունը

Պատմությունը և պատմական հիշողությունը էթնիկ խմբին դարձնում են ազգ: Ֆրանսիացի փիլիսոփա և պատմաբան Էռնեստ Ռենանի բնորոշմամբ՝ «Ազգը որոշակի արժեքների հանրագումար է և հպարտություն՝ պատմական անցյալի համար»: Պատմական հիշողությունը մեզ ազգային խմբին պատկանելության զգացում է տալիս: Մենք՝ հայերս, շատ ենք կապված պատմությանը: Եվ դա բնական է. մենք ունենք աշխարհի ամենահին պատմագրական դպրոցներից մեկը, որը սկսվում է Խորենացիով, Բուզանդով, Եղիշեով ու դարերի խորքից ստեղծում է պատմության մի ավանդույթ, որը միահյուսված է ոչ միայն մեր մշակույթին, քաղաքական մտքին, այլև մեր առօրյային: Տիգրան Մեծից մինչև Հայոց ցեղասպանություն՝ պատմական շատ ու շատ իրադարձություններ մշտական քննարկման առարկա են մեր հասարակության տարբեր հատվածների համար:Մյուս կողմից, քաղաքական գործընթացները երբեմն անցյալի մասին գոյություն ունեցող պատկերացումների զոհ են դառնում: Մշակութային գործիչները հաճախ պատմության մեջ են ոգեշնչման աղբյուր որոնում, իսկ հասարակ քաղաքացիները հպարտանում հաղթանակներով՝ դրանցում փառքի նաև սեփական մասնաբաժինը գտնելով:Մենք փորձում ենք զուգահեռներ անցկացնել, լուծումներ փնտրել անցյալի իրադարձություններում, ողբում սխալների համար, հպարտանում հաջողություններով: Մեր պատմությունը մեր պարծանքն է, երբեմն մեր ամոթը ու միշտ մեր գաղտնիքը:

Ինչպե՞ս հայկական էլիտան մեզ համար շրջադարձային որոշումներ կայացրեց՝ *301*-ին ընդունելով քրիստոնեությունն իբրև պետական կրոն, իսկ *405* թ. ստեղծելով սեփական գրերը: Ինչպե՞ս Կիլիկիայում հաստատված գաղթականները ոչ միայն համախմբեցին հայկական համայնքը, այլև վերաստեղծեցին Հայկական պետականությունն ու դարձան աշխարհի ամենահզոր առևտրական պետություններից մեկը: Ինչո՞ւ դարերով՝ *1045*-ից, կամ Կիլիկիայի անկումից՝ *1375*-ից մինչև *1918*-ը, չունենալով պետականություն, չվերացանք պատմության թատերաբեմից: Ինչո՞ւ ընկավ Կարսը և կործանվեց Առաջին հանրապետությունը: Ի՞նչ տվեց մեզ Խորհրդային Հայաստանի ընթացքը:

Այս ու բազմաթիվ այլ հարցերի պատասխանների փնտրտուքն է միգուցե այն տոկունության գաղտնիքը, որը մեզ թույլ է տվել ապրել ու հասնել մինչև 21-րդ դար՝ կորուստներով, անասելի զոհերով, տագնապներով լի, սակայն ապագային նայելու ունակությամբ ու վճռականությամբ: Դեռ երբեք մենք այսքան մոտիկից չեն զգացել պատմական իրադարձությունները և գիտակցել դրանք: Պատմությունը մեր կողքին է:

-Ինչ է պատմություն սովորելը



Եթե սովորողները չիմանան և չհասկանան ժամանակագրական առանցքային հատվածները,կարևոր պատմական գործիչների և իրադարձությունների անվանումներն ու թվականները,ապա դշվար կլինի ասել ,թե նրանք պատմություն գիտեն:Այնուամենայնիվ, <<անցյալի մասին գիտելիքը>> ՝ որպես ուսումնառության վերջնարդյունք,մեզ չի կարող բավարարել երկու պատճառով:Նախ՝ հնարավոր չէ պնդել ,թե պատմություն գիտես եթե չգիտես ,թե ինչպես է ստեղծվում պատմական գիտելիքը:



Մտածողություն- ընդգրկում է «մտքերի ու զուգորդությունների նպատակաուղղված հոսքը, որը կարող է հանգեցնել իրականության հանդեպ եզրակացության» : Թեև մտածողությունը գոյաբանական արժեք ունեցող գործառույթ է մարդկանց համար, դրա սահմանման կամ գիտակցման վերաբերյալ փոխհամաձայնություն գոյություն չունի:

Քանի որ մտածողությունը հիմնված է մարդու գործողությունների և մարդկային փոխազդեցությունների վրա, դրա ֆիզիկական և մետաֆիզիկական ծագումը, գործընթացները և ազդեցությունները հասկանալը շատ գիտաճյուղերի նպատակն է եղել:Մտածողությունը թույլ է տալիս մարդկանց մեկնաբանել, ներկայացնել կամ մոդելավորել աշխարհում իրենց փորձառությունը և կանխատեսումներ անել հենց այդ աշխարհի վերաբերյալ:







Մտածողությունն իր մեջ ընդգրկում է՝

-վերլուծություն

-համադրություն

-Ինչ է պատմական ակտիվ մտածողությունը

Մտածելու գործառույթը կենսական դեր ունի որևէ բան իմանալու և հիշելու համար:Պտմությունը հարցադրում է:Պատմության ուսումնառությունը նույնպես պետք է հարցադրումներով զբաղվի .առաջ քաշի անցյալի մասին հարցեր և այդ հարցերին պատասխաններ գտնի:Հարցեր տալն ու դրանց պատասխանելն ակտիվ մտածողական աշխատանք է:Այս գործընթացը խթանում է գիտելիքի ստեղծումը և սովորողի ներգրավվածությունը՝ նամանավանդ երբ հարցերը <<բաց>> ու մոտիվացնող են:

–Ինչպես պատմական մտածողություն զարգացնել

Պատմությունը գիտելիք է կառուցում քննելով անցյալի <<մնացորդները>> ՝ արխիվային փաստաթղթերը,հնավայրերը,թանգարանային արտեֆակտները,հուշերը և այլն: Անցյալի գործողությունները հասկանալու համար անհրաժեշտ է պատմական հեռանկար ունենալ:Պատմության ուսումանսիրությունը հաճախ առաջ է քաշում նաև էթիկական հարցեր:Պատմական մտածողության ներքոհիշյալ հասկացությունները և դրանց հետ փոխկապակցված ընկալումները պիտի ձգտենք զարգացնել ,որոնք ծնում են նոր մարտահրավերներ:Դրանք են՝

-վկայություն,հարցադրում և ուսումնասիրություն

-պատմական պատճառ և հետևանք

-փոփոխություն և շարունակականություն

-պատմական նշանակություն

-պատմական հեռանկար

-էթիկական հարթություն

-առողջ մտածողության կարևորություն

Ստորև ներկայացվում է սովորողների համար այդպիսի խնդիրներ առաջ քաշող մի շարք հարցեր՝

-կարող ենք անցյալից սովորել

-կարող է պատմությունը մեզ ասել ,թե ով ենք մենք

-ինչ է ժամանակահատվածը,դարը,դարաշրջանը

-ինչուն են իրադարձությունները տեղի ունենում

-Արդյոք նշանակությունը կախված է միայն այն դիտարկողից

ԳԼՈՒԽ 2. ԻՆՉՊԵՍ ՊԱՏՄԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՆԵԼ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Այստեղ ընդգծվում է աշակերտների քննադատական մտածողության հմտությունների զարգացման կարևորությունը պատմության դասավանդման ընթացքում: Որպես ներգործության միջոց՝ առանձնացվում է հարցադրումներով իրականացվող ուսումնառությունը: Այն կօգնի բացահայտել պատմական փաստերի ու երևույթների պատճառահետևանքային կապերը, կզարգացնի դրանք գնահատելու կարողությունը՝ ձևավորելով փոխանցելի հմտություններ: Բանալի բառեր. ինֆորմացիա, քննադատական, ստեղծագործական մտածողություն, պատճառահետևանքային կապ, վերլուծություն, բաց հարցեր, գնահատում, ճանաչողություն: Այս հոդվածում կփորձենք ներկայացնել առաջադեմ կրթական համակարգեր ունեցող տարբեր երկրների գիտամանկավարժական փորձը ուսումնասիրվող խնդրի վերաբերյալ (Մեծ Բրիտանիա, ԱՄՆ, Ռուսաստան և այլն): Ըստ այդմ՝ կվերլուծվեն և կներկայացվեն մի շարք հոդվածներ ու աշխատություններ, կբացահայտվեն առկա մոտեցումներն ու միտումները: Նախևառաջ մեզ հետաքրքրում էր այն հարցը, թե հնարավո՞ր է արդյոք դասավանդման միջոցով զարգացնել սովորողի մտածողության հմտություններն առհասարակ, և ինչպիսին են այս ոլորտում առկա գիտական մոտեցումները: Ըստ այդմ՝ դիտարկվել են Սուխոմլինսկու, Դայանա Հալփերնի, Արթուր Չափմանի (Լոնդոնի համալսարանական քոլեջի Կրթության ինստիտուտի պատմության մասնագետ, ում հետ համագործակցել եմ Արարատյան բակալավրիատի Կրթության գերազանցության ազգային ծրագրի շրջանակներում), Լերների և այլոց մոտեցումները: Նպատակն է առաջարկել միջոցներ աշակերտների՝ պատճառահետևանքային կապերը վերլուծելու, փաստերն ու երևույթները գնահատելու հմտության զարգացման համար, որոնք ինքնին քննադատական և պատմական մտածողության մաս են կազմում: Առաջադրված վարկածն է՝ բաց հարցերի միջոցով իրականացվող ուսումնառությունը կարո՞ղ է նպաստել նշյալ հմտությունների զարգացմանը: Արդիականությունը: Ժամանակակից աշխարհում ինֆորմացիայի արագ ներհոսքի պայմաններում կարևորագույն խնդիր է դառնում ոչ միայն ինֆորմացիային տիրապետելը, այլև արժևորելը և համապատասխան իրավիճակներում կիրառելը: Այս խնդիրը առկա է հասարակական կյանքի գրեթե բոլոր բնագավառներում, երբ մարդիկ, առանց երևույթների պատճառների մեջ խորամուխ լինելու, չհիմնավորված եզրակացություններ են անում, տալիս են միակողմանի գնահատականներ, առանց վերլուծելու կրկնում են այլոց տեսակետներն ու կարծիքները: Մեր խնդիրն է սովորեցնել առարկայորեն մտածել և առարկայի միջոցով ձևավորել քննադատական մտածողության (այսուհետև՝ ՔՄ

որոշակի փոխանցելի հմտություններ: Մանկավարժական գործունեության ընթացքում իմ ուշադրության առանցքում մշտապես եղել է աշակերտների ստեղծագործական ու քննադատական մտածողության հմտությունների զարգացումը: Տարվա ընթացքում աշակերտների կողմից իրականացված տարաբնույթ առաջադրանքները ցույց տվեցին, որ շատ ավելի բարձր արդյունքներ են արձանագրվում այնպիսի առաջադրանքներ կատարելիս, որոնք ենթադրում են փաստական նյութի չեզոք վերարտադրություն, ավելի հեշտությամբ են պատասխանում այն հարցերին, որոնք ենթադրում են պատմական այս կամ այն փաստի, երևույթի իմացություն: Սակայն դժվարությամբ են համադրում փաստերը, գտնում պատմական երևույթների միջև առկա կապերը, վերլուծում երևույթների պատճառներն ու հետևանքները: Շատ դեպքերում աշակերտներին չի հաջողվում արտահայտել սեփական տեսակետը, ապացուցել այն անհրաժեշտ փաստարկներով, հիմնավորված դատողություններ անել, գնահատել փաստերն ու երևույթները: Այս ամենը հնարավոր է իրականացնել քննադատական մտածողության հմտությունների զարգացման շնորհիվ: 69 Քննադատական մտածողությունը մտածողության համակարգ է, որն օգտագործվում է փաստերի ու իրադարձությունների վերլուծության համար, հնարավորություն է տալիս փաստարկված եզրակացություններ անել, հիմնավորված գնահատականներ տալ, մեկնաբանել, կիրառել ստացված արդյունքները նման այլ իրավիճակներում: Քննադատական մտածողության բաղադրատարրերը համարվում են գլոբալ մտածողության բաղկացուցիչ և՝

· կանխորոշում են ուսումնառության նպատակները,

·հանգեցնում են կարծրատիպերի հաղթահարման,

· նպաստում են աշխարհի ամբողջական ընկալմանը,

· նպաստում են աշխարհի ճանաչմանը իր բոլոր կողմերով,

·ապահովում են անձի բաց լինելը այլընտրանքի նկատմամբ, զարգացնում են պրոբլեմի լուծման ալտերնատիվ ուղիները տեսնելու կարողությունը:

Սուխոմլինսկին սովորողների մտածողության զարգացումը դպրոցական կրթության ամենասուր, ամենախնդրահարույց պրոբլեմներից մեկն է համարել : Գիտելիքի և մտածողության միջև եղած կապը փորձում է բացահայտել Դայանա Հալպերնը: Մտածողությունը օգնում է մեզ կիրառել նախկինում ձեռք բերված գիտելիքները նորը կառուցելու համար: Մտածողության այդ տեսակին դիմում են խնդիրներ լուծելիս, եզրակացություններ ձևակերպելիս, երևույթներ ու փաստեր գնահատելիս, որոշումներ ընդունելիս:



«Քննադատական» բառը իր մեջ գնահատողական բաղադրիչ է պարունակում: Երբեմն այդ բառի ներքո ինչ-որ բացասական երանգ է փոխանցվում: Բայց գնահատականը պիտի լինի կառուցողական՝ արտահայտելով և՛ դրական, և՛ բացասական վերաբերմունք: ՔՄ-ն կոչում են նաև նպատակադրված մտածողություն, որովհետև այն ուղղված է ցանկալի արդյունքի ստացմանը: Նախևառաջ մեզ հետաքրքրում էր այն հարցը, թե հնարավոր է արդյոք դասավանդման միջոցով զարգացնել սովորողի մտածողության հմտություններն առհասարակ, և ինչպիսին են այս ոլորտում առկա գիտական մոտեցումները: Իսկ կան արդյոք ապացույցներ այն մասին, որ մտածողությունը կարելի է բարելավել: Անցկացվել են մի շարք հետազոտություններ, որոնց արդյունքների ամփոփումը թույլ է տալիս եզրակացնել, որ ուսուցման շնորհիվ հնարավոր է զարգացնել ՔՄ-ը, հատկապես այն դեպքում, երբ ուսումնառությունը միտված է այնպիսի հմտությունների ու կարողությունների ձևավորմանը, որոնք կարելի է 70 կիրառել տարբեր իրավիճակներում և գիտական տարբեր ոլորտներում: Պատմական մտածողության զարգացման վերաբերյալ հետաքրքիր մոտեցումներ է առաջարկում Լերները: Ուսուցիչը կոնկրետ օրինակի միջոցով կարող է ցույց տալ աշակերտին փաստերի միջև եղած օրինաչափությունները, բացատրել այս կամ այն երևույթը: Սակայն սովորողը կարող է առնչվել որևէ ինֆորմացիայի և ստիպված լինել ինքնուրույն պատասխաններ գտնել: Պետք է զարգացնել սովորողների ակտիվությունն ու հասցնել նրան, որ նա մշտապես զգա ավելի լայն փաստեր ու երևույթներ իմաստավորելու պահանջ: Պրոբլեմի լուծման նման մոտեցումը միաժամանակ ցույց է տալիս առհասարակ աշխարհայացքային այլ պրոբլեմների լուծման եղանակները: Արդյունքում սովորողի մոտ ձևավորվում է ընդհանուր մոտեցում վերլուծության նկատմամաբ առհասարակ, որը հանգեցնում է սոցիալական երևույթների իմաստավորման և հասանելի որոշակի պրոբլեմների լուծման: Որպես քննադատական մտածողության դրսևորումներ՝ մենք կարևորում ենք պատճառահետևանքային կապերի վերլուծության, փաստերն ու երևույթները գնահատելու կարողությունները: Վերջիններս համարվում են «պատմական մտածողության» հայեցակարգի կարևոր բաղկացուցիչներ : Որպես ներգործության միջոց՝ նախընտրելի է կիրառել բաց հարցադրումների հետևյալ տեսակները՝ Ինչու՞, Ի՞նչ հետևանքների է հանգեցնում, Ինչպե՞ս եք գնահատում....: Ընդ որում այդ երեք տեսակի հարցերի միջոցով կառուցվում է պատճառահետևանքային կապերի տրամաբանական ամբողջական մեկ շղթա: Նշեմ նաև, որ այս հարցադրումներին պատասխանելիս աշակերտների իրականացրած ճանաչողական գործունեությունը համապատասխանում է Բլումի մշակած

աստիճանային համակարգի վերին աստճաններին և ենթադրում է գնահատում, աստիճանակարգում, արժևորում: Մտածողությունը՝ որպես ակտիվ ու նպատակաուղղված գործընթաց, սկսվում է առաջադրված որոշակի հարցերից: Տրամաբանության մեջ հարցը ձևակերպվում է որպես որոշ ինֆորմացիայի հարցում: Այլ կերպ հարցը մեկնաբանվում է որպես խթանող նախադասություն: Ինչքան մեծ է ինֆորմացիան, որի հետ դու աշխատում ես, այնքան կարևոր է կարողանալ առանձնացնել գլխավորն ու երկրորդականը: Այս առումով կարևոր է հարցադրումներ անելը: Բաց հարցերը ունեն մի շարք առավելություններ փակ հարցերի նկատմամբ: Դրանք թույլ են տալիս առանց որևէ սահմանափակման արտահայտել սեփական տեսակետը, առանձնացնել ամենաէականը, բարձրացնել այնպիսի խնդիրներ, որ անգամ հարցադրողի մտքով չի անցել, բացահայտել առկա հակասությունները, երևույթներն ու փաստերը դիտարկել լրիվ այլ տեսանկյունից: Հարցը յուրատեսակ մանրադիտակ է, գիտելիքների որոշակի համակարգ, որն իր մի մասով (հարցով) բնորոշում էայն, ինչ արդեն իսկ գիտենք, և ընկած է մեր գիտելիքի հիմքում, իսկ երկրորդ մասով (պատասխան) կա որոշ չիմացություն, այսինքն՝ այն, ինչ մենք ուզում ենք իմանալ : Վերլուծությունները փաստում են, որ հնարավոր է ուսուցման միջոցով զարգացնել ՔՄ հմտություններ: Այդ նպատակով նախընտրելի է բաց հարցերի կիրառումը: Դրանք մեծացնում են աշակերտների հետաքրքրությունը թեմայի նկատմամբ և կարող են մոտիվացնող նշանակություն ունենալ: Սովորողը փորձում է առաջադրված խնդրի լուծման նոր ուղիներ փնտրել: Բաց հարցերը դրդում են աշակերտին փաստերի վերլուծության, զուգահեռների որոնման, հիպոթեզի առաջադրման, ձևավորում են հստակ կողմնորոշիչ մոտեցում ընթացիկ թեմայի առավել կարևոր խնդիրների հանդեպ: Արդյունքում պատմական համապատասխան նյութի վերլուծության շնորհիվ աշակերտների մոտ ձևավորվում են փոխանցելի հմտություններ, որոնք թույլ են տալիս նրանց ցանկացած իրավիճակում անել հիմնավորված եզրակացություններ, կանխատեսել հնարավոր հետևանքները, իսկ գնահատելիս լինել շրջահայաց, փաստերն ու երևույթները դիտարկել տարբեր տեսանկյուններից, չշտապել դատողություններ անելիս:

Նույնիսկ ուսուցման ակտիվ մեթոդների կիրառման պարագայում (բանավեճեր, քննարկումներ, դերային խաղեր) դրանք շարունակում են հիմնվել մեկ աղբյուրի վրա՝ հնարավորություն չտալով սովորողներին

ընկալելու պատմական մտածողության կարևոր հղացքներից մեկը՝ պատմության բազմահեռանկարությունը, ինչպես նաև ցույց տալ պատմական գիտելիքի ձևավորման ընթացքը՝ հետազոտական հարցադրման ձևակերպումը, տարաբնույթ, հաճախ իրարամերժ աղբյուրների հետ աշխատանքի սկզբունքները: Նշյալ աշխատանքների ժամանակ արձանագրում ենք. - Սովորողները հիմնականում հղում են կատարում փաստերին, նկարագրում դրանք, բայց դժվարանում են բացատրել, վերլուծել: Դատողություններ կատարելիս սովորողները հաճախ հիմնվում են չհիմնավորված, երբեմն էլ՝ երևակայական, մտացածին պնդումների վրա՝ դրանք հաստատող վկայություններ չտրամադրելով: - Նրանք դժվարանում են իրենց դատողություններում հավասարակշռություն պահպանել. հիմնվում են իրենց տեսակետը հաստատող վկայությունների վրա, բայց անտեսում են հակառակ տեսակետը, հեռանկարը: Նրանց դատողությունները հաճախ հիմնվում են իրենց արդի փորձառության վրա, ինչը հանգեցնում է պրեզենտիզմի՝ անցյալի մասին արդիականության տեսանկյունից դատողություններ անելուն: Այլ կերպ ասած՝ առարկայի շրջանակում նրանք հնարավորություն չեն ունենում բավարար չափով դրսևորելու և զարգացնելու պատմական մտածողության առանձին հմտություններ և քննադատական մտածողություն, որը 21-րդ դարում անհատի և քաղաքացու առանցքային կարողունակություններից (կոմպետենցիա) է:

- վերլուծել փաստարկները, հարցադրումները կամ վկայությունները,

- կիրառել ինդուկտիվ և դեդուկտիվ դատողություններ՝ ելնելով իրավիճակից,

- դատել կամ գնահատել,

- որոշումներ կայացնել և խնդիրներ լուծել:

Այլ կարողությունների շարքում նշվում են նաև՝ հարցեր տալ պարզաբանումների համար, մեկնաբանել և բացատրել, տեսնել խնդրի երկու կողմը և այլն:

Շատ ուսումնասիրողներ պնդում են, որ, բացի հմտություններից ու կարողություններից, քննադատական մտածողությունն ընդգրկում է նաև հակվածություն, դիրքորոշում, վերաբերմունք՝ լայնախոհություն, անկողմնակալություն, տեղեկացված լինելու ցանկություն, պատճառների որոնման հակվածություն, հետաքրքրասիրություն, հարգանք ուրիշի կարծիքի հանդեպ և այն հաշվի առնելու ցանկություն:

Ինչ է բազմատեսանկյուն մոտեցումը :“Բազմատեսանկյուն մոտեցումը” այնպիսի տերմին է, որը բավականին հաճախ են օգտագործում, բայց ավելի հազվադեպ են սահմանում: Կ. Պետեր Ֆրիցշեն գտնում է, որ դա մի գործընթաց է, “ընկալման ռազմավարություն”, որը ենթադրում է, որ մենք մեր սեփական տեսակետին զուգահեռ հաշվի ենք առնում նաև ուրիշի տեսակետը (կամ ուրիշների տեսակետները): Այս գործընթացը նաև ենթադրում է, որ մենք հասկանում ենք, որ մեր սեփական տեսակետը ձևավորվել է մեր սեփական մշակութային համատեքստի ազդեցության տակ, արտացոլում է մեր դիրքորոշումը և մեկնաբանությունն այն

մասին, թե ինչ է տեղի ունեցել և ինչու, թե ինչն է կարևոր և ինչը՝ ոչ, ինչպես նաև կարող է արտացոլել մեր նախապաշարմունքները և կաղապարները: Այս առումով բազմատեսանկյուն մոտեցումը ոչ միայն ռազմավարություն է, այլև նախատրամադրվածություն, այն նշանակում է "պատրաստ լինել և կամենալ իրադրությունը դիտարկել տարբեր տեսանկյուններից"

Ընդհանուր առմամբ, կարելի է եզրակացնել, որ պատմության և պատմության դասավանդման մեջ բազմատեսանկյուն մոտեցման հիմնական բնորոշ առանձնահատկությունը հետևյալն է, այն իրենից ներկայացնում է որոշակի պատրաստակամություն՝ դիտարկելու պատմական իրադարձությունները, անձնավորությունները, զարգացումները, մշակույթները և հասարակությունները տարբեր տեսակետներից, օգտագործելով եղանակներ և մեթոդներ, որոնք հիմնարար դեր են խաղում պատմական գիտության մեջ: Սա բավականին պարզ սահմանում է, որը, թվում է, ակնհայտորեն որևէ խնդիր չի պարունակում: Այնուամենայնիվ, ինչպես դա հաճախ է լինում, այդ սահմանումն ավելի շատ հարցեր է առաջացնում, քան առաջարկում պատասխաններ: Այդպիսի հարցերից են, օրինակ.

- Ի՞նչ է այս համատեքստում նշանակում "տեսանկյուն":
- Արդյո՞ք ուսուցիչը կամ պատմաբանը պետք է ընգրկի բոլոր տեսակետները, թե դրանց ընտրություն պետք է կատարվի:
- Եթե տեղի է ունենում ընտրություն, ինչպիսի չափանիշներ պետք է կիրառվեն որոշելիս, թե որ տեսակետը պետք է ընդգրկվի և որը կարող է բաց թողնվել:
- Արդյո՞ք բազմատեսանկյուն մոտեցումը կիրառվում է միայն աղբյուրների ընտրության և մեկնաբանության մեջ, թե այն ընդգրկում է պատմական վերլուծության բոլոր մակարդակները
- Ի՞նչ պետք է անի պատմաբանը կամ ուսուցիչը, երբ տարբեր տեսակետները հակասում են իրար:
- Արդյո՞ք բազմատեսանկյուն մոտեցումն ապահովում է ավելի պատմության ավելի ճշգրիտ, թե՞ ավելի արդարացի ներկայացում, թե՞ երկուսն էլ միասին:
- Արդյո՞ք այն մաս է կազմում այն մեթոդաբանության, որն օգտագործում է ցանկացած իրազեկ պատմաբան, թե որոշ մասնագետներ այն կիրառում են ավելի արդյունավետ կերպով, քան մյուսները:

Տեսանկյունը մի հայացք է, որը սահմանափակված է այն դիրքորոշմամբ, որն արտահայտում է դրա կրողը: Սա, անշուշտ, վերաբերում է ինչպես պատմաբանին, այնպես էլ սկզբնաղբյուրներ ստեղծողներին (պատմական իրադարձությունների մասնակիցներ, ականատեսներ, ժամանակագիրներ, պաշտոնյաներ և տեղեկատվությունը հավաքողներին):

Այսպիսով, պետության կրթական քաղաքականությունը մշակող գերատեսչությունն ունի պետության զարգացման նպատակով առաջնահերթությունների և գերակայությունների սահմանման առաքելություն, իսկ այն, որ քննադատական մտածողության ձևավորումն ու զարգացումը գերակայություն է՝ բխում է պետության զարգացման ռազմավարական ծրագրերից:

Ուսումնասիրության արդյունքները ցույց տվեցին, որ ՀՀ կրթական համակարգը այսօր չի նպաստում քննադատական մտածողության ձևավորմանը և զարգացմանը, որը հանդիսանում է բարձրագույն կրթության առաջնահերթ նպատակներից մեկը: Խորհրդային միությունից ժառանգած կրթական համակարգը դեռևս չի բավարարում ՀՀ կրթական համակարգի առջև դրված ներպետական խնդիրների լուծմանը և եվրոպական չափանիշներին, որոնք պարտավորվել ենք ներդնել՝ Բոլոնիայի գործընթացին միանալով: Դասախոսների և ուսանողների շրջանում իրականացրած հարցումները վկայում են այն մասին, որ այսօր կիրառվող դասավանդման մեթոդաբանությունը ոչ միայն չի նպաստում քննադատական մտածողության ձևավորմանը, այլև սահմանափակում է ուսանողի ինքնարտահայտման և ինքնադրսևորման հնարավորությունները: Այդ մասին են խոսում ուսանողների՝ դասընթացը նկարագրող հարցերի պատասխանները: Դասերը հիմնականում անց են կացվում դասախոսությունների տեսքով, ինչը քննադատական մտածողության ձևավորման համար թիվ 1 խոչընդոտն է: Ուսումնառության ակտիվ մեթոդները հիմնականում անծանոթ են անգամ ՀՀ բուհերի դասախոսներին, իսկ ուսանողներն էլ սովորել են աշխատել միայն քննական շրջանում: Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ համապատասխան կրթական միջավայրի բացակայության պայմաններում ուսանողները հիմնականում չեն տիրապետում քննադատական մտածողության համար անհրաժեշտ հմտություններին: ՀՀ կրթական համակարգը իրականում նպաստում է գիտելիքի ձևավորմանը, ինչն անչափ կարևոր է, սակայն մյուս կարևոր բաղկացուցիչը այդ գիտելիքի կիրառումն է, որի համար անհրաժեշտ են համապատասխան հմտություններ: Մեր օրերում հավասար կարևորություն ունեն գիտելիքը, հմտությունները և կարողությունները, և բարձրագույն կրթությունը պետք է ուսանողին զինի բոլոր այդ երեքով: Հարցումները վկայում են նաև այն մասին, որ շատ փոքր թիվ են կազմում քննադատաբար մտածող ուսանողները: Այս արդյունքն ամենևին անակնկալ չէր, քանզի բացակայում են այն նախադրյալները, որոնք ձևավորում են քննադատական մտածողություն: Սակայն հարկ է նշել, որ շնորհիվ այդ փոքրաթիվ ուսանողների հնարավոր եղավ տեսնել կապը քննադատական մտածողության և կոնֆլիկտների կարգավորման միջև: Պարզ դարձավ, որ այն ուսանողները, ովքեր առավել հանդուրժողական մոտեցում են դրսևորում կոնֆլիկտների կարգավորման նկատմամբ, ունեն քննադատական մտածողություն: Հետաքրքիր արդյունք ենք համարում նաև այն, որ չկա համընդհանուր ընկալում թե ինչ է քննադատական մտածողությունը: Թե՛ դասախոսները, թե՛ ուսանողները քննադատական մտածողությունը հաճախ նույնացնում էին քննադատության հետ: Սա առաջացնում է մեծ շփոթություն և նման մտածողությունը դիտվում է, որպես բացասական եր

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Որպես պատմագետ և ուսուցիչ՝ անհանգստությունս ավանդական մոդելի կիրառման կապակցությամբ հանգում է հետևյալին՝ այն հնարավորություն չի տալիս սովորողին լիարժեք օգտվելու տվյալ գիտակարգի հնարավորություններից, մասնավորապես՝ սովորողների մոտ զարգացնելու պատմության ուսումնասիրությանը հատուկ բարձր կարգի մտածական հմտություններ և քննադատական մտածողություն, որոնք անհրաժեշտ են նրան ցկյանս, և այն թյուր պատկերացում է տալիս սովորողին «պատմություն» գիտակարգի էության, բովանդակության և գործառույթի մասին: Միևնույն ժամանակ, ավանդական մոտեցումը շեշտում է բովանդակային գիտելիքը, որը ոչ միայն չպետք է ստվերվի, այլև հավասարակշռորեն համադրվի նշյալ հմտությունների զարգացման հետ: Նշյալ խնդիրների լուծմանը նպատակաուղղված պատմության դասավանդման այլընտրանքային մոտեցումների որոնումն էլ հանգեցրեց սույն գործողության հետազոտությանը : Ընտրությունը կանգնեց պատմության դասավանդման քննադատական մտածողության զարգացման մի մեթոդի վրա, որը սահմանվում է իբրև «պատմության ստեղծում» (doing history):

Հետազոտողների հավաստիացմամբ՝ այն հնարավորություն է տալիս սովորողին պատկերացում կազմելու պատմագիտական գիտելիքի ձևավորման, պատմագետի աշխատանքի և նրա կողմից կիրառվող հետազոտական մեթոդների մասին, ներգրավում է նրան պատմական գիտելիքի ստեղծման մեջ , սովորեցնում է «կարդալ պատմագետի նման», «մտածել պատմագետի նման», «հետազոտել պատմագետի նման»: Առաջարկվող տարբեր ռազմավարություններից նախընտրել ենք բազմակի աղբյուրների հետ աշխատանքը, քանզի և՛ ուսումնասիրված գրականությունը, և՛ պատմագիտական-հետազոտական փորձառությունը փաստում են, որ այն կարող է նպաստել պատմության առավել խոր ընկալմանը, հնարավորություն տալ հասկանալու նրա տարահեռանկարությունը: Տարատեսակ, իրարամերժ աղբյուրների վերլուծությունը, գնահատումը, մեկնաբանությունը և դրանցով պայմանավորված եզրակացությունները հնարավորություն են տալիս ձևավորելու և զարգացնելու քննադատական և պատմական մտածողության մի շարք հմտություններ:

Եվ ինչ է փնտրում ուսուցիչը.....

Երևի թե ոչինչ ավելի,քան իր կորուսյալ ամբողջությունն ու իր հոգևոր նմանակին:

Դառնամ,զոհորմին տամ Հ.Ա.Ճառյանին,ով բարձր ուսումն ու գիտությունն կարևորեց,կանգնած էր լեզվի պահպանման դռներին:

Եվ ... ինչ անի ուսուցիչը...

Կառուցի իր երկիրը՝որքան էլ որ աշխարհի ժամանակը տարտամ ու անորոշ.որքան էլ որ մեծարվի հիմա շահեկանի,աշխարհի մտքի ցինիզմը,կառուցի և էլի նորից կառուցի իր երկիրը `ազգովի,ներսինն ու դրսինը մեկտեղ:Եվ կառուցի ազնվորեն,ինչպես որ օրհասական պահի իր նվիրակ զավակների ջանքն էր:

Ազնվորեն.....Այնպես,հանց տեղի համար,ուր որ ոչ ցեցը և ոչ ժանկը չապականեն:

Սովորողներին պետք է ուղղորդենք ոչ թե դեպի մեր անցյալը,այլ՝ իրենց ապագան:Եվ գլխավոր հարցն այն է,թե ինչպիսի մոտեցում է այսօր անհրաժեշտ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1.Պատմություն և մշակույթ հայագիտական հանդես,2021, № 1 Գլխավոր խմբագիր՝ էդիկ Մինասյան

2.Պատմության դասավանդման բազմատեսանկյուն բազմատեսանկյուն ազմատեսանկյունմոտեցումը մոտեցումը մոտեցումը. ուսուցչի ձեռնարկ Դոկտոր Ռոբերտ Ստրաղլինգ

3.Քննադատական մտածողություն ձևավորող կրթությունը որպես կանխակալ մտածողության արդյունքում ծագած հակասությունների կարգավորման գրավական 2/13/2012. Հեղինակ՝ Արևիկ Անափիոսյան ,աջակից է՝ Շառլոտ Ֆրիմանը

4.Աշակերտների քննադատական մտածողության զարգացումը պատմության դասավանդման ընթացքում, Խաչատուրյան Ռ. Ս.

5.Аверьянов Л. Я. Социология: искусство задавать вопросы. Издание 2-е, переработанное и дополненное. Москва. Изд.-во “Москва” 998. 195 с.

6. Лернер И. Я. Развитие мышления учащихся в процессе обучения истории. М.: Изд.-во “Просвещение”. 1982. 191 с.

7. Сухомлинский В. А. Как развивать мышление и умственные силы детей. Москва. “Издательский Дом Шалвы Амонашвили”. 2002. 224 с.

8. Халперн Д.Ф. Психология критического мышления. СанктПетербург. Изд.-во “Питер”. 2000. 496 с.

9.Ինչու,ինչպես,Գիրք պատմության ուսուցման,Պարադիգմա կրթական հիմնադրամ

10.Սեյքսասի և Մորթոնի 2013թ. <<Պատմական մտածողության հասկացությունների մեծ վեցնյակը>>.